# ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ

## ՈՐԳԱՑԻՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԹՈՔԱԽՏ

### ԱՄԵՐԻԿԱԲՆԱԿ ՎԱՃԱՌԱԿԱՆԻ ՄԸ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ

Մասնագէտի մը պատասխանը

×

Ամերիկաբնակ Հայ վաճառական մը, Պր. Արտաշէս Պէօշէեան, որ Պոստընի մէջ որդավաճառութեամբ կ՚զբաղի եղեր, Առեւելեան գորգերու առուտուրը ...

...

ողողուի, սպառումը ոչ թէ կը դիւրանայ, այլ կը դժուարանայ, և անկումը անխուսափելի կը դառնայ։ Աղօթեցէք որ հիմա փոքր քանակութեամբ կ՚երթայ և շատ թէ քիչ շահ կ՚արտադրէ, հապա՞ եթէ շատ քանակութեամբ երթայ...։

# ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ

## ՏԻԱՐ Մ. ՔԻՇԻՇԵԱՆԻ "ՔԱՂԱՔ. ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹԵԱՆ" ԱՌԹԻՒ

Քանի որ առեւտրական վարժարան մը չունինք դեռ, առեւտր. գիտելիքներու մասին մատենաշար մը անժխտելի օգտակարութիւն ունի անոնց համար որոնք կը պատրաստուին առեւտր. ասպարէզը մտնել։ Այդ գիրքերը թերուս առեւտրականներուն ինքնազարգացման նպաստելու առաւելութիւնը ունին։

Մանչեստրցի Հայ մը, Պ. Մ. Քէ...

...

ու ծիծաղին տեղի պիտի տան։ Օրինակի համար, ա՛յնպիսի հրապարակի մը վրայ ուր ծայրայեղ մրցում կայ, ուր աշխատողները գործ կ՚ուզեն և գործողները չահ, ինչ արժէք ունի սա հատուածը «Մա՛յլ, գնա՛ տես մրջիւնը, ո՛րպէս անդադար չարժման մէջ է ամառ եղանակին՝ իր ձմեռնային պաշարն ամբարելու, և օրինակ ա՛ռ»։

Զենք գիտեր թէ որո՛ւ համար գրած է սա խօսքերը.՝ — «Մնա՛ցէք, ուսուցէք ձեր զաւակաց խնայողասիրութիւնն, յորդորելով զանոնք իրենց պղնձեայ դրամները — բէնիները դնելու, յանձնելու դպրոցական Բանկի պաճ դրամատանց քովը։ Մի՛ դեդեւիք գալ յանձնելու, ևլն.։» Բոլորովին անդի անպատշաճ չէ՞ սա հատուածը, «...այս տեսակէտով դրամօժիտի խնդիրն ընդունած և ըստ օրինի բացատրած են, որ կրնայ միայն օգտէտ և կեղծ բարոյախօսներէ քննադատուիլ և անգոսնուիլ», քանի որ մեր եկեղեցական իշխանութիւնք դեռ չէ ընդունած դրամօժիտի օրինաւորութիւնը։

Տնտեսագիտութեան գիրքի մը մէջ ինչ գործ ունի սա խօսքը. «Սակարանի գործողութեանց մէջ խելացի ու հեռատես մարդը՝ քանի մը անգամ երբ բաղդ ունեցաւ կարեւոր գումարներ շահելու, խկոյն իր վերջին հնաք բարեաւն ընելով ետ դառնալ պէտք է»։ Շատ տղայական չէ՞ սա գաղափարը, ...

...

Շատ...ան չատ մը թերութիւններ դասաւորումի տեսակէտով։ Լեզուն ալ շատ խրթին և մութ է։

Ա. ԳԱԼՖԱՔՃԵԱՆ

# ՏԸՆԲԻՆԿԸ ԵՒ ԱՆՈՐ ՏԵՍԱԿՆԵՐԸ

## ՄԱՔՍԱՊԱՇՏՊԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱԶԱՏ ՓՈԽԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ ԱՆԳԼԻՈՅ ՄԷՋ

Ուսումնասիրութիւն

ՈՒԻՆՍԴԸՆ ՉԸՐՉԻԼԻ ԵՒ ԷՐՄԻԴԷՅՃ ՍՄԻԹԻ

Ո՛չ մէկ բառ այնչափ շատ գործածուած է մաքսապաշտպան դրութեան առթիւ որքան Տըմբինկը։

Ի՞նչ է Տըմբինկը։

Անգլիոյ մէջ ամէն մարդ Տըմբինկ կ՚անուանէ բիրտ մրցումը։

Գործարանատէրը այս բառով կը բացատրէ դիւրաւ առեւտրական ամէն ...

... Dumping from strength & Dumping from weakness ...

...

Առեւտրական այս երեւոյթին բացատրութիւնը՝ յաջորդ անգամ։

# ՄԱՆԻՖԱԹՈՒՐԱՅԻ ՀՐԱՊԱՐԱԿԸ

Ընդհանուր տեսութիւն մը առեւտրական գործերու վրայ

×

Վերջացող շաբթուան մէջ քիչ շատ գործեր եղան հրապարակին վրայ։ Բամբակը, իր անակնկալ բարձրացումով, բաւական լաւ ազդեցութիւն թողուց, այնպէս որ շատեր վարանեցան իրենց ապրանքը ծախելու։ Բայց երկարատեւ անգործութեան պատճառաւ վաճառականները չուզեցին բարձր գին պահանջել իրենց յաճախորդներէն, ինչպէս որ գործարանատէրները կը պահանջէին իրենցմէ։ Թէեւ գիներու տարբերութիւններ եղան, բայց շատ աննշան են։

Հրապարակին վրայ տեսակ կայ բայց կրնանք ապահովաբար ըսել որ պիտի պակսի։

Մահուտին խնդրանքը շատ զօրաւոր չէ, իսկ խամին խնդրանքը շատ է։ ...

...

...մէջ է մանիֆաթուրաճին յաջողութիւնը։

# ԳԱՏԸԳԻՒՂԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԸ ԵՒ ՕՍՄ. ԿԱՅՍ. ՊԱՆՔԱՆ

Գատըգիւղի Ֆրէրներուն Առեւտրական վարժարանի քննութիւնները աւարտեցան Յունիս 29ին։ Քննիչներն էին Ֆրանս. դեսպանատան թարգմանը, իբրեւ պատուիրակ Ֆրանսայի Առեւտրական Նախարարութեան, և Տեարք Բէրբինեանի, Հանրային Պարտուց Վարչութենէն՝ Պ. Թէսդա, Օսմ. Պանքայէն, Բօրպէգղի և Սէզար Սախն Ռէժիէն, և Էրնէստ Ժիրօ՝ Նախագահ Ֆրանս. Առեւտրական Սենեկին։

Երեք հարցումներ եղան շրջանաւարտներուն, որոնք տասնական վայրկեան միայն խօսեցան իւրաքանչիւր նիւթի վրայ։ Քննութեան այս ձեւը Բարիզի Առեւտրական Բարձրագոյն ուսմանց վարժարանէն ընդօրինակուած էր։

Այս տարի վարժարանը ընծայեց իր երկու տղրանիկ շրջանաւարտները, որոնք առեւտրական ընդհանուր ծանօթութիւններ ստացած էին և քննիչներուն գովեստին արժանացան։ Երկու շրջանաւարտները անմիջապէս պաշտօնի կոչուեցան Օսմ. Կայս. Պանքային մէջ։

...

Առեւտրական Սենեկի ներկայացուցիչները, որոնց վկայութիւնը անշուշտ թանկագին երաշխաւորութիւն մըն է շրջանաւարտներուն յաջողութեանը համար։

ՍԻՄՈՆ ՉԷՕՄԼԷՔՃԵԱՆ

# ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿ

## Կ. ՊՈԼՍՈՅ

(1905 Յուլիս 5 երեքշաբթի)

ՑՈՐԵՆ

| | | |
|---|---|---|
| Ներմակ Առաջին օխան | 39-39½ | փարա |
| » երկրորդ » | 38 | » |
| Մախլիւթ » | 35-36 | » |
| Զավարը » | 31-33 | » |
| Սէրթ առաջին, օխան | 37½ | փր. |
| » միջին տեսակ | 36½-37 | » |

Այսօր ժամանեց 9 վակոն ցորեն Անատոլ։

ԱԼԻՒՐ

| | | |
|---|---|---|
| Տեղական զըրմա Ա. պարկը | 74-75 | ղ. |
| » » Բ. » | 72-73 | » |

ԹԵՓ

Օխան 18 փարա։

ԳԱՐԻ

Քէօստէնճէ 13-13¼ ղրշ. գրիւէ

Մէրսին 12-12½ ղրշ. գրիւը։

ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍ Ֆ. ԳԱՅՍԷՐԵԱՆ